# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ՈՐՈՇՈՒՄ N 241-Ա

«26» փետրվարի 2024 թվական                                        գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-076-0033-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,1318 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի և 39-րդ կետի պահանջների, որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ղարիբջանյան բնակավայրի տարածքում գտնվող, 08-076-0033-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,1318 հեկտար մակերեսով հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ղարիբջանյան , 12-րդ փողոց, 2 բնակելի տուն»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝                    Ջ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«26» փետրվարի 2024 թվական
գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
## ՈՐՈՇՈՒՄ N 242-Ա

«26» փետրվարի 2024 թվական գյուղ Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-051-0001-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,01151 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՌԱՖԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Կամո բնակավայրի տարածքում համայնքային սեփականության 08-051-0001-0011 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում գտնվող 0,01151 հեկտար մակերեսով հողամասում 2018-ից 2020 թվականներին կառուցվել են ինքնակամ համարվող բնակելի նշանակության շինություններ, որոնք մինչ օրս տիրապետում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Կամո գյուղի բնակիչ՝ Նիկողայոս Ռաֆիկի Առաքելյանը ով 2023 թվականի նոյեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարան դիմում է ներկայացրել ինքնակամ կառույցներն օրինականացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,01151 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության

քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին, որպես ինքնակամ կառույց հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023SFHYE3 ծածկագրով, չեն գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, կառույցների պահպանումը չի խախտվում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, դրանք կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կամ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետական կամ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ, 3-րդ կետերի դրույթներով որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Կամո բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 08-051-0001-0011 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,01151 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված 78,95 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 33,61 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, 8,21 քառակուսի մետր արտաքին մակերեսով նկուղը և 2,53 քառակուսի մետր արտաքին մակերեսով ծածկը ճանաչել օրինական և դրանք համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունները և դրանցով զբաղեցված հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցներն իրականացրած անձանց՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Կամո գյուղի բնակիչ՝ Նիկողայոս Ռաֆիկի Առաքելյանին:
3. Անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականության իրավունքները ենթարկել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«26» փետրվարի 2024 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 243-Ա

«26» փետրվարի 2024 թվական գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԱՆ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՈՒՐՈՒՇԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ, 33.1-րդ, 34-րդ կետի, 35-րդ կետի «ա» և «ե» ենթակետերի, 35.1-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որշման 2-րդ կետի «գ» ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը՝ որը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի (Շիրակի մարզ, 14-րդ գոտի) համար 0,1209 է և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-007-0062-0033 կադաստրային ծածկագրով 0,01479 հեկտար մակերեսով հողամասի

վրա, քաղաքացի Վարդան Վարուժանի Ոսկրուշանյանի կողմից ինքնակամ կառուցված 147,9 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը և աստիճանը (հետագայում շինություն) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 1-ի թիվ 419-Ա որոշմամբ ճանաչվել է օրինական, համարվել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն և անշարժ գույքի նկատմանբ համայնքի իրավունքները ենթարկվել են պետական գրանցման, որոշում եմ՝

1. Օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված շինությունները, ինչպես նաև դրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-007-0062-0033 կադաստրային ծածկագրով 0,01479 հեկտար մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքով օտարելու մասին գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ շինություններն իրականացրած քաղաքացի՝ Վարդան Վարուժանի Ոսկրուշանյանին:
2. Օրինական ճանաչված շինության և համապատասխան հողամասի համար սահմանել վաճառքի հետևյալ գներն ու պայմանները՝
   1) Շինության վաճառքի գինը կազմում է՝ 536434 (հինգ հարյուր երեսունվեց հազար չորս հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
   2) Բնակելի նշանակության շինության պահպանման և սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի մեկ քառակուսի մետրի կադաստրային արժեքը սահմանված է 1221 Հայաստանի Հանրապետության դրամ: 0,01479 հեկտար մակերեսով հողամասի օտարման գինը կազմում է՝ 180586 (մեկ հարյուր ութսուն հազար հինգ հարյուր ութսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
   3) Սահմանված չափերով ձևավորված կառույցի և հողամասի ուղղակի վաճառքի ընդհանուր գինը կազմում է 717020 (յոթ հարյուր տասնյոթ հազար քսան) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին:
   4) Սույն կետի 3-րդ ենթակետով ձևակերպված վաճառքի ընդհանուր գնին հավելվում են տվյալ գույքային միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:
   5) Ինքնակամ շինությունն իրականացրած անձի կողմից գնման նախապատվության առաջարկն ընդունելու, սակայն 30 օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գինը չվճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է գրավոր առաջարկություն՝ կառույցը վարձակալելու վերաբերյալ:

6) Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից կառույցի վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն վաճառվում կամ օգտագործման է տրամադրվում հրապարակային սակարկություններով՝ աճուրդի կամ մրցույթի ձևով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ինքնակամ կառույցն իրականացրած քաղաքացի Վարդան Վարուժանի Ուրուշանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«26» փետրվարի 2024 թվական
գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

## ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 244-Ա

«26» փետրվարի 2024 թվական                                        գյուղ Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ԱՆՑՈՒՂԻ 27 ՀԱՍՑԵԻ 08-007-0150-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Նազան Վարոսի Մոսոյանը (ծնված 08/05/1947 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ համասեփականության իրավունքով իր ընտանիքին պատկանող Ախուրյան գյուղի Հովհաննես Շիրազի փողոց, 3-րդ անցուղի, 27 հասցեի 08-007-0150-0005 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,1076 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Համասեփականության իրավունքով Նազան Վարոսի Մոսոյանին, Ֆրիզ Վանոյի Մկրտչյանին և Գևորգ Ֆրիզի Մկրտչյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան գյուղի, Հովհաննես Շիրազի փողոց, 3-րդ անցուղի, 27 հասցեի հողամասի վրա գտնվող ինքնակամ կառույց համարվող 159,81 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, շվաքարանը, անասնաշենքը և նկուղը կառուցվել են 1994 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից առաջ), իսկ ինքնակամ կառուցված 60,77 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, օժանդակ շինությունը և շվաքարանը 2007-ից 2019 թվականներին (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024X98NSU ծածկագրով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերի և 22.1 կետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Ախուրյան գյուղի (Շիրակի մարզ, 14-րդ գոտի) համար 0,1209 է, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան գյուղի Հովհաննես Շիրազի փողոց, 3-րդ անցուղի, 27 հասցեի հողամասի վրա 1994 թվականին կառուցված 159.81 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, շվաքարանը, անասնաշենքը և նկուղը ճանաչել օրինական առանց վճարների գանձման:
2. Նույն հողամասի վրա 2007-ից 2019 թվականին ինքնակամ կառուցված 60.77 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, օժանդակ շինությունը և շվաքարանը ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:
3. Սույն որոշման 2-րդ կետով օրինական ճանաչված բնակելի նշանակության յուրաքանչյուր մեկ քռակուսի մետրի օրինականացման համար սահմանել 10000 Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օժանդակ շինությունների յուրաքանչյուր մեկ քռակուսի մետրի օրինականացման համար սահմանել 6000 Հայաստանի Հանրապետության դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության 0,1209 գործակիցը:
4. Ընդամենը շինությունների օրինականացման համար հաշվարկված վճարը կազմում է 56825 (հիսունվեց հազար ութ հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
5. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 4-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի համասեփականատերերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
7. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«26» փետրվարի 2024 թվական

գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
# ՈՐՈՇՈՒՄ N 245 -Ա

«26» փետրվարի 2024 թվականի　　　　　　　　　　　　գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳՅՈՒՄՐՈՒ ԽՃՈՒՂԻ 64 ՇԵՆՔԻ ԹԻՎ 2 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼ ԲԱՐԻՍ ԱՐՍԵՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՉՈՐՍ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 01-ի թիվ 06-Ա որոշումը,

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն համարվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան բնակավայրի, Գյումրու խճուղի 64 շենքի, թիվ 2, երեք սենյականոց բնակարանը՝ 56.3 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքների և շենքով զբաղեցված հողամասի նկատմամբ բաժնային սեփականության իրավունքով նվիրաբերել Բարիս Արսենի Հակոբյանի ընտանիքի հետևյալ չորս անդամներին.

1) Հակոբյան Բարիս Արսենի (ծնված 1982 թվականի օգոստոսի 12-ին), ինքը,

2) Պողոսյան Անահիտ Հակոբի (ծնված 1982 թվականի օգոստոսի 26-ին), կինը,

3) Հակոբյան Հայկ Բարիսի (ծնված 2016 թվականի հոկտեմբերի 19-ին), տղան,

4) Հակոբյան Աբրահամ Բարիսի (ծնված 2023 թվականի ապրիլի 22-ին), տղան,

2. Սույն որոշման 1-ին կետով նվիրաբերված գույքը դուրս գրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի գույքացանկից:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները պետական գրանցման նպատակով ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ձ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

26 փետրվարի 2024 թվական
գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**
**ՈՐՈՇՈՒՄ N 246-Ա**

«27» փետրվարի 2024 թվական                                   գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄՈ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-051-0001-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ 0,01151 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ, 28-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կամո բնակավայրի տարածքում գտնվող 08-051-0001-0011 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության 0,01151 հեկտար մակերեսով հատվածի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման:

".Սույն որոշման 1-ին կետում նշված 0,01151 հեկտար մակերեսով հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Կամո, 5-րդ փողոց, 2/1 բնակելի տուն»:

3.Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ձ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«27» փետրվարի 2024 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 247-Ա

«27» փետրվարի 2024 թվական　　　　　　　　　　գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի թիվ 32-Ա որոշումը՝

Որոշում եմ՝

1. 2024 թվականի ապրիլի 2-ին, ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Մրցույթի անցկացումից մեկ ամիս առաջ «Առավոտ» օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am, Շիրակի մարզպետարանի և Ախուրյանի համայնքապետարանի պաշտոնական կայք էջերում հրապարակել հայտարարություն՝ մրցույթի անցկացման օրվա, տեղի, ժամի, հողամասերի գտնվելու վայրի, չափերի, կադաստրային ծածկագրերի, մեկնարկային գների, նախավճարների չափի, քայլերի չափի, օգտագործման նպատակի, ճանապարհների առկայության, հողերի որակական հատկանիշների և հողամասերի նկատմամբ սահմանափակումների մասին՝ համաձայն հավելված 2-ի:

3.Մրցույթը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 29-ի թիվ 137-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

27 փետրվարի 2024 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավարի 2024 թվականի
Փետրվարի 27-ի թիվ 247 -Ա որոշման

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի կադաստրային ծածկագիրը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողի որակական հատկանիշը | | Օգտագործման տրամադրման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը | Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հողի կարգ | Ջրովի/ անջրդի | | | |
| 1 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0101-0045 | վարելահող | 0.65155 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 13000 |
| 2 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0101-0047 | վարելահող | 1.0133 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 20000 |
| 3 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0101-0048 | վարելահող | 0.99486 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 20000 |
| 4 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0101-0049 | վարելահող | 1.00659 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 20000 |
| 5 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0101-0052 | վարելահող | 1.04187 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 20000 |
| 6 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0102-0011 | վարելահող | 0.68392 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 13700 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0107-0051 | վարելահող | 0.51945 | II | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 18000 |
| 8 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0114-0059 | վարելահող | 0.16109 | III | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 5000 |
| 9 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0114-0078 | վարելահող | 0.40446 | III | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 12000 |
| 10 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0114-0079 | վարելահող | 0.40528 | III | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 12000 |
| 11 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0114-0080 | վարելահող | 0.40805 | III | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 12000 |
| 12 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0114-0081 | վարելահող | 0.54887 | III | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 16000 |
| 13 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0134-0024 | վարելահող | 0,41257 | III | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 13000 |
| 14 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0134-0031 | վարելահող | 0,24704 | IV | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 7000 |

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավարի 2024 թվականի
Փետրվարի 27-ի թիվ 247-Ա որոշման

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանը հայտարարում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 14 կտոր հողերի վարձակալության մրցույթ:

Մրցույթը կկայանա 2024 թվականի ապրիլի 2-ին, ժամը 11:00-ին, Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, գյուղ Արևիկ, 8-րդ փողոց, շենք 24:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2024 թվականի մարտի 27-ը ներառյալ:

Հայտերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 13:00-ն, 14:00-ից 17:00-ն ներառյալ (Հայտերն ընդունվում են Արևիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում):

Մրցույթում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը:

Վարձակալության տրամադրվող հողերի նկարագիրը՝

Լոտերի թիվը՝ 14,

Հողերի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,

Վարձակալության տրամադրման ժամկետը՝ 10 տարի,

Մրցույթի ձևը՝ բաց,

Մրցույթի մասնակցության վճարի չափը՝ 2000 ՀՀ դրամ,

Նախավճարի չափը վարձավճարի մեկնարկային գնի նկատմամբ՝ 5%,

Քայլի չափը՝ վարձավճարի մեկնարկային գնի նկատմամբ՝ 5%

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի կադաստրային ծածկագիրը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողի որակական հատկանիշը | | Օգտագործման տրամադրման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը | Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հողի կարգ | Ջրովի/ անջրդի | | | |
| 1 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0101-0045 | վարելահող | 0.65155 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 13000 |
| 2 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0101-0047 | վարելահող | 1.0133 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 20000 |
| 3 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0101-0048 | վարելահող | 0.99486 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 20000 |
| 4 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0101-0049 | վարելահող | 1.00659 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 20000 |
| 5 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0101-0052 | վարելահող | 1.04187 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 20000 |
| 6 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0102-0011 | վարելահող | 0.68392 | III | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 13700 |
| 7 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0107-0051 | վարելահող | 0.51945 | II | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 18000 |
| 8 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0114-0059 | վարելահող | 0.16109 | III | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 5000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0114-0078 | վարելահող | 0.40446 | III | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 12000 |
| 10 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0114-0079 | վարելահող | 0.40528 | III | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 12000 |
| 11 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0114-0080 | վարելահող | 0.40805 | III | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 12000 |
| 12 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0114-0081 | վարելահող | 0.54887 | III | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 16000 |
| 13 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0134-0024 | վարելահող | 0,41257 | III | ջրովի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 13000 |
| 14 | ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Արևիկ | 08-020-0134-0031 | վարելահող | 0,24704 | IV | անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Չկան | 7000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 248-Ա

«27» փետրվարի 2024 թվական գյուղ Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԱՎՏՈԳԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ կետերի և 2-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 01-ի թիվ 05-Ն որոշման հավելված N 1-ի 6-րդ կետի դրույթը և հաշվի «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ավտոգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը որոշում եմ՝

1. «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ավտոգազ» (հարկ վճարողի հաշվառման համար 00842235, իրավաբանական անձի իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Թբիլիսյան խճուղի 43, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, Շիրակ բնակավայր) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել սեղմված բնական գազի վաճառք իրականացնելու թույլտվություն՝ 2024 թվականի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում  հայտատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ջ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«27» փետրվարի 2024 թվական

գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

«27» փետրվարի 2024 թվականի թիվ 249-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՋՐԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 7 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 08-007-0052-0056 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ օտարվող հողամասը բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 6-րդ ենթակետերի պահանջների և նույն որոշման 2-րդ կետի համաձայն չի դիտարկվում որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարման ենթակա հողամաս և ի կատարումն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի թիվ 29-Ա որոշման,

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավարի, Ջրաշինարարների փողոց, 7 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության 200 քառակուսի մետր մակերեսով հողամասի ընդլայնման համար, դրա հարևանությամբ գտնվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող 08-007-0052-0056 կադաստրային ծածկագրով 199 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդլայնվող հողամասի համասեփականատեր Մարգլետոնի Հրաչի (ծնված 04/04/1950 թվական) և Սուսաննա Սուրենի (ծնված 01/01/1954 թվական) Քոչարյաններին և նրանց հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

2.Օտարման գինը սահմանել Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի համար գործող, բնակավայրերի հողերի կադաստրային արժեքի չափով՝ մեկ քառակուսի մետրի համար 1221 Հայաստանի Հանրապետության դրամ: Հողամասի ընդհանուր արժեքը կազմում է 242979 (երկու հարյուր քառասուներկու հազար ինը հարյուր յոթանասունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ձ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

27 փետրվարի 2024 թվական
գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**
**Ո Ր Ո Շ Ու Մ**

28 փետրվարի 2024 թվականի N 251-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 28-ՐԴ ՓՈՂՈՑ 30 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ, 30-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի 3,1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված ցանկի 4-րդ կետի դասակարգումները և Վարուժան Սամսոնի Գրիգորյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի 28-րդ փողոց, 30 հասցեի հողամասի վրա գտնվող, 2024HHJYZ3 ծածկագրով հաշվառված գույքի շինությունների բնութագրում թիվ 2 համարակալմամբ 55,76 քառակուսի մետր մակերեսով նախկին խոհանոցի գործառնական նշանակությունը փոխել «ավտոտնակ» գործառնական նշանակության, նույն հողամասի վրա գտնվող թիվ 4 համարակալմամբ 44,15 քառակուսի մետր մակերեսով նախկին հացատան գործառնական նշանակությունը փոխել «անասնաշենք» գործառնական նշանակության:

2. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունը՝ գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«28» փետրվարի 2024 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

# ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 252-Ա

«29» փետրվարի 2024 թվական գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 7 ՀԱՍՑԵԻ 08-037-0054-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Քաջիկ Մկրտիչի Հարոյանը (ծնված 10/02/1964 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ համասեփականության իրավունքով իրենց ընտանիքին պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Երազգավորս գյուղի, 1-ին փողոց, 7 հասցեի, 0,32 հեկտար մակերեսով, 08-037-0054-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա, ինքնակամ կառուցված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Համասեփականության իրավունքով Քաջիկ Մկրտիչի Հարոյանին, Իրինա Ասքանազի Պողոսյանին, Գառնիկ և Արթուր Քաջիկի Հարոյաններին պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս գյուղի, 1-ին փողոց, 7 հասցեի հողամասի վրա գտնվող, ինքնակամ կառուցված 54,57 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով նկուղը և անասնաշենքը կառուցվել են 1989 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից հետո), նույն հողամասի վրա 255,8 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով նկուղները և բնակելի տունը կառուցվել 2012 թվականին: Ինքնակամ կառույները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024FBAUPS ծածկագրով:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին կետի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերի և 13-րդ կետի ա) ենթակետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Երազգավորս գյուղի (Շիրակի մարզ, 17-րդ գոտի) համար 0,0743 է և հիմք ընդունելով Քաջիկ Մկրտիչի Հարոյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս գյուղի, 1-ին փողոց, 7 հասցեի հողամասի վրա 2012 թվականին կառուցված 57,91 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով նկուղը ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:
2. Սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված բնակելի նշանակության շինության յուրաքանչյուր մեկ քռակուսի մետրի օրինականացման համար սահմանել 10000 Հայաստանի Հանրապետության դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության 0,0743 գործակիցը:
3. Շինության օրինականացման համար հաշվարկված ընդհանուր վճարը կազմում է 43027 (քառասուներեք հազար քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
5. Նույն հողամասի վրա 1989 թվականից մինչև 2012 թվականին կառուցված 252,46 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով նկուղները, բնակելի տունը և անասնաշենքը թողնել ինքնակամ, ինքնակամ կառույցների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունները և ռիսկերը կրում են հողամասի համասեփականատերերը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի համասեփականատերերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
7. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«29» փետրվարի 2024 թվական

գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 253-Ա

«29» փետրվարի 2024 թվական գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԱԶԱՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 32-ՐԴ ՓՈՂՈՑ 11 ՀԱՍՑԵԻ 08-004-0129-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Յոլակ Վալերի Հունոյանը (ծնված 22/11/1988 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ազատան գյուղի, 32-րդ փողոց, 11 հասցեի, 0,177 հեկտար մակերեսով, 08-004-0129-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա, ինքնակամ կառուցված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Սեփականության իրավունքով Յոլակ Վալերի Հունոյանին պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Աատան գյուղի, 32-րդ փողոց, 11 հասցեի հողամասի վրա գտնվող, ինքնակամ կառուցված 281,05 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը և նկուղը կառուցվել են 2010 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

